ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

/գնահատման նիստի/

<< ԱՇՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Գյումրի 27 սեպտեմբերի 2019թ.

ժամը 11:00

ՀՀ Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ը,

որը գտնվում է գ. Աշոցք, Ռուդակովի 1 հասցեում

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ Էմմա Սիմոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ Խորեն Կարապետյան

Էմմա Իվանյան

Հակոբ Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Թադևոսյան

1. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին » ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարությանմ առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի ,
- հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
- հայտը ներկայացնելուն նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

<< ԱՇՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

դունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների գնահատման արդյունքները:

Հ/Հ	Մասնակիցը	Հայտի գնահատականը
1	«Ցենտր սիթի» ՍՊԸ,	բավարար
2	«Հակոբ Սոսյան» Ա/Ձ	բավարար

Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետը՝ << *ԱՇՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/3*>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1. 3, 4 և 9 չափաբաժինների մասով՝«Ցենտր սիթի» ՍՊԸ,
2. 2, 5-8 և 10-20 չափաբաժինների մասով՝ «Հակոբ Սոսյան» Ա/Ձ.

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

1. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, «Աշոցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, որը գտնվում է ք. . Աշոցք, Ռուդակովի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Հանձնաժողովի
նախագահ՝ ---------- Է. Սիմոնյան

Անդամներ՝ ---------- Խ. Կարապետյան

---------- Է. Իվանյան

---------- Հ. Խաչատրյան

Քարտուղար՝ ----------Լ.Թադևոսյան